

Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2018թ. օգոստոսի 31-ի N1-08/18/9,

Փոփոխությունը կատարվել է 2025թ.-ի փետրվարի 26-ի
N1-02/25/1 որոշմամբ:



Գիտական խորհրդի նախագահ՝

Ն.Ա.Միքայելյան

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՀԱՇՎԱԴԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հաշվապահական հաշվառման քաղաքականությունը սահմանում է այն կոնկրետ սկզբունքները, մոտեցումներն ու կանոնները, որոնք Հիմնադրամն ընտրում է իր հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար:

Քաղաքականությունում փոփոխություններ և (կամ լրացումներ կարող են կատարվել միայն Հիմնադրամի ռեկտորի (այսուհետ՝ Ռեկտոր) որոշմամբ, եթե էական փոփոխություններ են տեղի ունենում Հիմնադրամի գործառնությունների բնույթում կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության միջոցով տրվում է առավել էական տեղեկատվություն, կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերում տեղի են ունեցել փոփոխություններ:

Քաղաքականությունը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է Հիմնադրամի ողջ անձնակազմին:

Քաղաքականությունը պետք է վերանայվի Հիմնադրամի գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ:

Քաղաքականությունը հանդիսանում է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմնական ներքին իրավական ակտը:

Քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել Հիմնադրամի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ձևավորման համապատասխանությունը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Քաղաքականությունը բխում է հետևյալ սկզբունքներից.

1. հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան հաշվապահական հաշվառման վարման ապահովում,
2. միջազգային ստանդարտներին համապատասխան Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման ապահովում,

3. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում առկա տեղեկատվության ներկայացում այն եղանակով, որն ապահովում է տեղին, արժանահավատ, համադրելի և հասկանալի տեղեկատվություն,

4. Հիմնադրամի կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ հաշվապահական վերահսկողության առկայության ապահովում:

2. ՀԱԾՎԱԴՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄԸ

Հիմնադրամը հաշվապահական հաշվառումը վարում է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն (Փոփ.կառ.են 26.02.2025, N1-02/25/1):

Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

1. Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթն է,

2. կրկնակի գրանցման եղանակով՝ Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան,

3. անընդհատ՝ Հիմնադրամի գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման պատասխանատվությունը կրում է Ռեկտորը.

Ռեկտորը՝

➢ սահմանում է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,

➢ ապահովում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և պատրաստումը:

Ռեկտորը (սահմանված դեպքերում՝ նաև այլ պաշտոնատար անձինք) ստորագրում է ապրանքանյութական արժեքների ու դրամական միջոցների ստացման, բացթողման, ինչպես նաև հաշվարկային, վարկային և այլ համանման պարտավորությունների հիմք հանդիսացող փաստաթղթերը:

Հաշվապահական հաշվառման վարումն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող հաշվապահական հաշվառման բաժնի միջոցով, որը ղեկավարում է գլխավոր հաշվապահը: Հաշվառումը վարվում է «Հայկական ծրագրեր» ընկերության «ՀԾ-հաշվապահ» համակարգչային ծրագրով:

Հիմնադրամը համապատասխան պետական մարմիններին օրենքով սահմանված կարգով, ժամկետներում և ձևով ներկայացնում է հաշվետվություններ:

Հիմնադրամն իր վերահսկողության տակ առկա ակտիվները և պարտավորությունները դասակարգվում է որպես ընթացիկի և ոչ ընթացիկի համաձայն ՖՀՄՍ-ի:

Դատողություններն անելիս՝ Հիմնադրամի ղեկավարությունը կարող է հաշվի առնել համանման և կապակցված հարցերին առնչվող ՖՀՄՍ-ի պահանջներն ու մոտեցումները:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄԸ

3.1. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթը

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է՝

1. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
2. համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
3. զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվությունը,
4. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,
5. ծանոթագրությունները, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

3.2.Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հիմնադրամը, հիմնվելով իր գործառնությունների բնույթի վրա, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացնում է առանձին դասակարգմամբ:

Ակտիվը դասակարգվում է որպես ընթացիկ, երբ այն բավարարում է ստորև նշված որևէ չափանիշի.

1. ակնկալվում է ակտիվն իրացնել կամ այն նախատեսված է վճարողի կամ սպառման համար՝ Հիմնադրամի սովորական գործառնական փուլի ընթացքում.
2. ակնկալվում է ակտիվն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում, կամ
3. ակտիվը դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ, երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ ակտիվները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

Պարտավորությունը դասակարգվում է որպես ընթացիկ, երբ այն բավարարում է ստորև նշված չափանիշներին.

1. ակնկալվում է պարտավորությունը մարել Հիմնադրամի սովորական գործառնական փուլի ընթացքում.
2. պարտավորությունը ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում, կամ
3. Հիմնադրամը չունի անվերապահ իրավունք հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

3.3.Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացվում են համաձայն ծախսերի գործառույթի մեթոդի: Այդ մեթոդի համաձայն՝ ծախսերը դասակարգվում են ըստ ծրագրի կամ նպատակի, որի համար դրանք կատարվել են: Միաժամանակ, ծանոթագրություններում բացահայտվում է լրացուցիչ տեղեկատվություն ծախսերի բնույթի վերաբերյալ, ներառյալ մաշվածության և ամորտիզացիայի, ինչպես նաև աշխատակիցների հատուցումների գծով ծախսերը:

3.4.Ձուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվությունը

Հիմնադրամի զուտ ակտիվները բոլոր ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո:

Ձուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվությունում ներկայացվում են հետևյալ բաղկացուցիչները՝

1. ժամանակաշրջանի հավելուրդը կամ պակասուրդը,
2. ժամանակաշրջանում ուղղակիորեն զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) ճանաչված հասույթները և ծախսերը, ինչպես նաև դրանց հանրագումարները,
3. զուտ ակտիվների (սեփական կապիտալի) առանձին բացահայտված յուրաքանչյուր բաղադրիչի համար հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքը և սխալների ուղղումը, որոնք ճանաչվում են՝ ՖՀՄՍ-ի համաձայն
4. ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ կուտակված հավելուրդի կամ պակասուրդի մնացորդը, ինչպես նաև ժամանակաշրջանի ընթացքում դրանց փոփոխությունները:

3.5. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանում դրամական միջոցների (ներառյալ դրամական միջոցների համարժեքների) հոսքերը՝ դրանք դասակարգելով ըստ գործառնական գործունեության, ներդրումային գործունեության և ֆինանսավորման գործունեության:

Դրամական միջոցները դրամարկղում դրամական միջոցներն են:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացման առումով գործառնական գործունեությունը Հիմնադրամի գործունեությունն է, բացառությամբ՝ ներդրումային և ֆինանսավորման գործունեությունների:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը ներկայացվում է ուղղակի մեթոդով, ըստ որի բացահայտվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական դասերը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում, ներկայացման առումով, ֆինանսավորման գործունեությունը գործունեություն է, որը հանգեցնում է Հիմնադրամի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների:

Դրամական միջոցների կամ դրանց համարժեքների հոգվածների միջև ներքին շարժերը դրամական միջոցների հոսք չեն հանդիսանում:

3.6. Ծանոթագրություններ

Ծանոթագրություններում՝

1. ներկայացվում է տեղեկատվություն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու հիմունքների, ինչպես նաև ընտրված կոնկրետ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին,
2. բացահայտվում է ՖՀՄՍ-ով պահանջվող այն տեղեկատվությունը, որը ներկայացված չէ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական արդյունքների

մասին հաշվետվությունում, զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվությունում, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում,

3. տրամադրվում է լրացուցիչ տեղեկատվություն, որը ներկայացված չէ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, զուտ ակտիվներում (սեփական կապիտալում) փոփոխությունների մասին հաշվետվությունում, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում, սակայն տեղին է այդ հաշվետվություններից յուրաքանչյուրը հասկանալու համար:

4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՈՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ

4.1. Հիմնական միջոցներ

4.1.1 Ծանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և

բ) դրա սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով:

Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում:

Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման և արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ինքնարժեքի մաս:

4.1.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում չի ճանաչվում ամենօրյա սպասարկման ծախսումները: Փոխարենը, այդ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարմանը զուգընթաց: Ամենօրյա սպասարկման ծախսումները հիմնականում աշխատուժի և օգտագործված նյութերի ծախսումներն են, ինչպես նաև կարող են ներառել մանր դետալների ծախսումները: Այդ ծախսումների նպատակը հաճախ նկարագրվում է որպես հիմնական միջոցների միավորի «վերանորոգում, պահպանում և (կամ) սպասարկում»:

Հիմնական միջոցների որոշ միավորների մասերը կարող են պահանջել պարբերաբար փոխարինում: Հիմնական միջոցի արժեքում ճանաչվում են նման միավորի փոխարինվող մասի ծախսումները, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի ընթացիկ արժեքը ապաճանաչվում է:

4.1.3 Հետագա չափումը

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

4.1.4 Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցի միավորի գծով սկզբնապես ճանաչված գումարը բաշխում է ըստ դրա նշանակալի մասերի և այդ յուրաքանչյուր մասի համար մաշվածությունը հաշվարկում է առանձին: Հիմնական միջոցի միավորի մեկ նշանակալի մասը կարող է ունենալ օգտակար ծառայության նույն ժամկետը և մաշվածության հաշվարկման նույն մեթոդը, ինչ որ նույն միավորի մեկ այլ նշանակալի մասը: Նման մասերը խմբավորվում են մաշվածության գումարը որոշելիս:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են՝

Շենք, շինություններ	20-50 տարի
Տրանսպորտային միջոցներ	8-10 տարի
Արտադրատնտեսական գույք	8-10 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-5 տարի
Այլ հիմնական միջոցներ	6-8 տարի

Հիմնական միջոցների մաշեցվող գումարը հավասար է դրա համախառն հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (մնացորդային արժեքը այն զուտ գումարն է կամ պիտանի նյութերի իրական արժեքը, որը Հիմնադրամն ակնկալում է ստանալ ակտիվից դրա օգտակար ծառայության վերջում՝ դուրս գրման սպասվող ծախսերը հանելուց հետո) միջև տարբերությանը:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ընդունվում է հավասար 0-ի, եթե առկա չէ տեղեկատվություն այն բանի վերաբերյալ, որ մնացորդային արժեքը տվյալ հիմնական միջոցի կտրվածքով էական գումար է կազմում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը պարբերաբար վերանայվում է և, եթե նոր գնահատականները զգալի չափով տարբերվում են նախորդ գնահատականներից, ընթացիկ և հետագա հաշվետու ժամանակաշրջանների մաշվածության գումարները ճշգրտվում են՝ անփոփոխ թողնելով նախորդ ժամանակաշրջանների համար հաշվարկված մաշվածության գումարները:

Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն իր ներկա վիճակով պատրաստ է օգտագործման համար (անկախ փաստացի օգտագործվելու հանգամանքից) և

այլևս չի դադարեցվում, մինչև տվյալ հիմնական միջոցի ապաճանաչումը կամ «որպես վաճառքի համար պահվող» դասակարգումը՝ «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ին համապատասխան:

4.1.5 Հիմնական միջոցների ապաճանաչում

Հիմնական միջոցների միավորը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը, որը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն, ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորը ապաճանաչվում է:

4.2. Ոչ նյութական ակտիվներ

4.2.1. Ոչ նյութական ակտիվների սահմանումը

Ոչ նյութական ակտիվը ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որն առկա է ավելի քան մեկ տարվա ընթացքում շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար:

4.2.2. Ոչ նյութական ակտիվների ճանաչումը

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

1. հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն Հիմնադրամ,
2. ակտիվի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել,
3. ակտիվը ոչ նյութական միավոր գծով Հիմնադրամի ներսում կատարված ծախսումների արդյունք չէ:

4.2.3. Սկզբնական չափում

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

1. գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերն և գնման չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները: Ընդ որում, ոչ նյութական ակտիվի գնման գինը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Եթե ձեռք բերված ոչ նյութական ակտիվի դիմաց վճարումը վճարման նորմալ պայմաններով նախատեսված ժամկետից հետաձգվում է, ապա անհապաղ վճարման գնի համարժեքի և ընդհանուր վճարումների տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային ծախս,
2. ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսում: Սա կարող է ներառել աշխատակիցների հատուցումների գծով ծախսումները, մասնագիտական վճարների գծով ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են ակտիվն իր աշխատանքային վիճակին բերելու հետ, ինչպես նաև ակտիվի պատշաճ աշխատանքի թեստավորման ծախսումները:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքում չեն ներառվում մասնավորապես հետևյալ ծախսումները՝

1. նոր արտադրատեսակ կամ ծառայություն ներդնելու հետ կապված ծախսումները (ներառյալ գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները),
2. նոր վայրում կամ հաճախորդների նոր խմբի հետ գործունեություն իրականացնելու ծախսումները (ներառյալ աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման գծով ծախսումները),
3. վարչական և այլ ընդհանուր վերադիր ծախսումները,
4. փոխառության ծախսումները:

Ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ ակտիվը գտնվում է այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով: Հետևաբար, ոչ նյութական ակտիվի օգտագործման կամ վերագործարկման ընթացքում կրած ծախսումները չեն ներառվում այդ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

4.2.4. Ոչ նյութական ակտիվների չափումը ճանաչումից հետո

Ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան:

4.2.5. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա

Բոլոր ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացվող գումարը ակտիվի սկզբնական արժեքն է:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ամորտիզացիայի գումարը ճանաչվում է հավելուրդում կամ պակասուրդում, բացառությամբ, եթե այն ներառվում է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

4.2.6. Օգտակար ծառայություն

Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Հիմնադրամը ակնկալում է օգտագործել ակտիվը:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը գնահատվում է այն պահին, երբ դրանք դառնում են մատչելի օգտագործման համար:

4.2.7 Ամորտիզացիայի ժամանակաշրջան և ամորտիզացիայի մեթոդ

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան սկսում է հաշվարկվել, երբ ոչ նյութական ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ամորտիզացիայի հաշվարկումը դադարեցվում է, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով:

4.2.8 Ամորտիզացիայի ժամկետի վերանայում

Ոչ նյութական ակտիվի օգտագործման փոփոխությունները, տեխնոլոգիական բարելավումները, ինչպես նաև շուկայական գների փոփոխությունները կարող են վկայել, որ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը ամենավերջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանից սկսած փոփոխվել է: Օգտակար ծառայության փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություն:

4.2.9. Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում

Ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է (դուրս է գրվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից), երբ.

1. այն օտարվում է (ներառյալ չփոխանակվող գործարքի միջոցով օտարումը), կամ՝

2. դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է հավելուրդում կամ պակասուրդում, երբ այդ ակտիվը ապաճանաչվում է: Այդպիսի օգուտները չեն դասակարգվում որպես հասույթ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտը կամ վնասը որոշում է որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

4.3. Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Հիմնադրամին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությունից տարբերվող վարձակալությունը համարվում է գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվները չեն ճանաչվում Հիմնադրամի կողմից:

4.4. Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների ձեռք բերման ծախսումները ներառում են ձեռք բերման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, կոմիսիոն վճարները, տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և պաշարների ձեռք բերման հետ ուղղակիորեն կապված այլ ծախսումները: Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների ինքնարժեքը որոշվում է FIFO (ԱՄԱԵ՝ առաջինը մուտք, առաջինը՝ ելք) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

4.5. Արժեզրկում

Հիմնադրամի ակտիվների, բացառությամբ պաշարների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ

հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

4.5.1. Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Հիմնադրամի դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է այդ ակտիվը:

4.5.2. Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքագրելիության պահուստը): Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ ստեղծվում է, երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի ժամանակին հավաքագրել բոլոր գումարները՝ դեբիտորական պարտքերի առաջացման սկզբնական պայմաններին համապատասխան:

Որպես դեբիտորական պարտքի արժեզրկման հնարավոր հայտանիշներ են ընդունվում դեբիտորի նշանակալի ֆինանսական դժվարությունները, նրա սնանկացման մեծ հավանականությունը, վճարումների էական ուշացումները: Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական

պարտքը՝ դուրս է գրվում պահուստի հաշվին: Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստի ստեղծումը, փոփոխությունները, ինչպես նաև դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.7. Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

4.8. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Եթե եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել, և հավանական է, որ Հիմնադրամը կստանա հատուցում, ծառայությունների հասույթը ճանաչվում է այն ժամանակահատվածում, երբ դրանք տրամադրվում են:

Ապրանքների փոխանակում

Երբ ապրանքները փոխանակվում են նույն բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը չի դիտվում որպես հասույթ առաջացնող գործարք:

Երբ ապրանքները փոխանակվում են տարբեր բնույթի և արժեքի ապրանքներով և ծառայություններով փոխանակելու միջոցով, փոխանակումը դիտվում է որպես հասույթ առաջացնող գործարք: Հասույթը չափվում է ստացված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով: Երբ ստացված ապրանքների իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, հասույթը չափվում է տրված ապրանքների իրական արժեքով՝ ճշգրտված ցանկացած փոխանցված դրամական միջոցների և դրանց համարժեքների գումարով:

4.9. Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ

այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

4.10. Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության ժամկետի ընթացքում:

4.11. Ֆինանսական ծախսեր և եկամուտներ

Ֆինանսական եկամուտը ներառում է Հիմնադրամային ավանդներից ստացվող տոկոսային եկամուտները: Տոկոսային եկամուտը ճանաչվում է հաշվեգրման պահին՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները: Փոխառության գծով տոկոսները, բացի այն դեպքից, երբ դրանք կապիտալացվում են, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք հաշվեգրվում են:

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման և արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ինքնարժեքի մաս:

4.12. Կապակցված կողմերի բացահայտումներ

4.12.1 Կապակցված կողմ

Կողմը կապակցված է Հիմնադրամին, եթե այդ կողմը.

ա/ ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ մեկ կամ ավելի միջնորդների միջոցով,

- վերահսկում է Հիմնադրամին,
- գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ,
- համատեղ վերահսկողություն է իրականացնում Հիմնադրամի նկատմամբ,

բ/ Հիմնադրամի առանցքային կառավարչական անձնակազմի անդամ են.

- կառավարիչը,
- անձիք, որոնք ուղղակիորեն պատասխանատու են Հիմնադրամի գործունեության պլանավորման, ուղղորդման և վերահսկողության համար,

գ/ վերոնշված անձանց ընտանիքի մտերիմ անդամ են.

- անձի զույգը (ամուսինը),
- անձի երեխանները:

4.12.2 Կապակցված կողմերի գործարքներ

Կապակցված կողմերի հետ գործարքը ռեսուրսների, ծառայությունների կամ պարտականությունների փոխանցում է կապակցված կողմերի միջև՝ անկախ վճարի գանձումից:

Եթե կապակցված կողմերի միջև եղել են գործարքներ, ապա Հիմնադրամը բացահայտում է.

- կապակցված կողմի փոխհարաբերության բնույթը,
- գործարքի բնույթը,
- չմարված մնացորդները
- ժամկետները և պայմանները,
- ապահոված լինելը,
- մարման համար վճարվելիք հատուցման բնույթը,
- տրված կամ ստացված երաշխիքի վերաբերյալ մանրամասներ,
- կասկածելի պարտքերի պահուստները և նրանց գծով ճանաչված ծախսերը:

4.12.3 Առանցքային կառավարչական անձնակազմի գծով բացահայտումներ

Հիմնադրամը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

- հատուցումները՝ կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
- ազատման նպաստները,
- մասնակցության վրա հիմնված վճարումները:

4.13. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում, նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղումներ

4.13.1. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այնպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,

բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի

ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

4.13.2. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները դրանք ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներառվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ.

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

4.13.3. Նախորդող ժամանակաշրջանի էական սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները դրանք մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Նախորդող ժամանակաշրջանի էական սխալները ուղղվում են հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո.

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4.14. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

4.14.1. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի սահմանումը

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը և բարենպաստ, և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները

վավերացվում են հրապարակման (ներկայացման) համար, նույնիսկ եթե այդ դեպքերը տեղի են ունենում հավելուրդի կամ պակասուրդի մասին հայտարարությունը հրապարակելուց, վերահսկվող Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները վավերացնելուց կամ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ընտրված այլ տեղեկատվություն հրապարակելուց հետո: Տարբերակվում է դեպքերի երկու տեսակ՝

1. դեպքեր, որոնք տրամադրում են վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ: Նման դեպքերը հանդիսանում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր, և

2. դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ամսաթվից հետո առաջացած պայմանները: Նման դեպքերը հանդիսանում են հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր:

Հաշվետու ժամանակաշրջանն այն ժամանակաշրջանն է, որին վերաբերում են ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման (ներկայացման) համար վավերացման ամսաթիվն այն ամսաթիվն է, որի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝ դրանք ներկայացնելու համար ավարտուն վիճակի բերելու իրավասություն ունեցող անձի կամ մարմնի կողմից:

4.14.2. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի ճանաչումը և չափումը

4.14.2.1. Ճշգրտող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ճշգրտող դեպքեր են՝

1. հաշվետու ժամանակաշրջանից հետո կայացված դատարանի վճիռը, որը հավաստում է, որ Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ ներկա պարտականություն,

2. հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղեկատվության ստացումը, որը վկայում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆինանսական ակտիվը արժեզրկված էր, կամ, որ այդ ակտիվի համար նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստի գումարը ճշգրտման կարիք ունի: Օրինակ՝ պարտապանի սնանկացումը, որը տեղի է ունենում ժամանակաշրջանից հետո, սովորաբար հաստատում է, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դեբիտորական պարտքերի գծով կորուստն առկա էր, և որ Հիմնադրամը կարիք ունի ճշգրտելու դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը,

3. մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը ձեռք բերված ակտիվների արժեքի կամ ակտիվների վաճառքից հասույթների՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո որոշումը,

4. հաշվետու ամսաթվից հետո հաշվետու ամսաթվի ընթացքում հավաքագրված հասույթի գումարի որոշումը, որը ենթակա է բաշխման մեկ այլ կառավարման մարմնի հետ՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հասույթի բաշխման համաձայնագրի համաձայն,

5. հաշվետու ժամանակաշրջանից հետո աշխատակիցներին վճարվելիք պարգևավճարների գումարի որոշումը, եթե Հիմնադրամը հաշվետու

ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուներ նման վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես արդյունք մինչև այդ ժամանակաշրջանի վերջը տեղի ունեցած դեպքերի,

6. կեղծիքների կամ սխալների հայտնաբերում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

4.14.2.2. Չճշգրտող դեպքեր

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Չճշգրտող դեպք է, երբ Հիմնադրամը, որն իրականացնում է համայնքային կոնկրետ ծրագրեր, հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները վավերացնելը, որոշում է տրամադրել (բաշխել) լրացուցիչ օգուտները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, այդ ծրագրերի մասնակիցներին:

4.15. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Հիմնադրամն այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

4.16. Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Հիմնադրամի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

4.17 Ֆինանսական գործիքներ

Հիմնադրամում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- վարկեր և փոխառություններ,
- դրամական միջոցներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, վարկերը և փոխառությունները չեն դասակարգվում որպես իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, որոնց փոփոխությունը արտացոլվում է ժամանակաշրջանի շահույթում և վնասում:

Դրամական միջոցները կազմված են դրամարկղի և Հիմնադրամային հաշիվների միջոցներից:

4.17.1 Ծանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

4.17.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական, կրեդիտորական պարտքերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը դա այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և հանած արժեզրկման գծով դուրս գրված ցանկացած գումար:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և կիրառվող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամուտների և ծախսերի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով մինչև մարման ժամկետը կամ շուկայի վրա հիմնված հաջորդ վերանայումը դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ զուտ հաշվեկշռային արժեքը:

4.17.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է (դուրս է գրվում հաշվեկշռից) այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը, կամ

բ) Հիմնադրամը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում հաշվեկշիղ այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

Գիտական խորհրդի նախագահ

Ն.Ա.Միքայելյան

Գիտական քաղցրուղար

Լ.Գ.Այդինյան

